

«*Գրանցված է*»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
30 սեպտեմբերի 2002 թ.
Պետական գրանցման թիվ 10602214

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

19 օգոստոսի 2002 թ.
ք. Երևան

N 229-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՄՄԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ. ապրիլի 29-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ գյուղնախարարի 2002 թ. հուլիսի 4-ի N 188 հրամանը:
2. Հաստատել «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի և մսամթերքի պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը»: (հավելվածը կցվում է)
3. Նախարարության սննդի և վերամշակող արդյունաբերության գլխավոր վարչությանը (Մ. Գրիգորյան)՝ յոթնօրյա ժամկետում «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի և մսամթերքի պահպանման ժամանակ առաջացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը» ներկայացնել ՀՀ պետական եկամուտների նախարարություն՝ համաձայնեցման և ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Լ. Ռուխկյանին:

Նախարար

Դ. Զաղոյան

Հավելված

Համաձայնեցված է՝
ՀՀ պետական եկամուտների
նախարարություն
20 օգոստոսի 2002 թ.

Հաստատված է՝
ՀՀ գյուղատնտեսության նախարարության
19 օգոստոսի 2002 թ.
N 229-Ն հրամանով

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆԿԱԶԵՑՎՈՂ ՄՄԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ ակտը մշակված է հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածը և սահմանում է մսի և մսամթերքի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

2. Մսի և մսամթերքի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում մսի և մսամթերքի պահպանման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՄՄԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ (ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՍՏԻ ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

1. Սպանդից անմիջապես հետո բնական պաղեցման կամ սառնարանում մինչև 4 աստիճան ցելսիուսի սառեցման ժամանակահատվածում

- տավարի մսի (երկատված, քառատված կամ մասնազիտացված մսեղիքով) - 1.6 տոկոս
- ոչխարի և այծի մսի (ամբողջական կամ երկատված մսեղիքով) - 1.7 տոկոս
- խոզի մսի (ամբողջական կամ երկատված մսեղիքով, խոճկոր) - 1.5 տոկոս
- թռչնի միս (հավ, հնդկահավ, սագ, բադ` ամբողջական մսեղիքով) - 1.0 տոկոս

2. Սառեցված միսը սառնարանում պահպանելիս

ՄՍԵՂԻՔԸ	Կորստի չափը տոկոսներով
Տավարի երկատված, քառատված կամ մասնատված մսեղիք	0.55
Ոչխարի և այծի ամբողջական և երկատված մսեղիք	0.65
Խոզի ամբողջական և երկատված մսեղիք	0.35
Թռչնի միս (հավ, հնդկահավ, սագ, բադ` ամբողջական մսեղիքով)	0.30

